

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2, ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակէր Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով Միւր կը ստանանք սեփական ձեռնարկները:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատան մէջ (Բաղնիկայա և Բաղնիկայա փողոցների անկիւնում) Թամազիսի տանը):
Կայտարարութիւն ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ անուն տանք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հատարակական կարծիքը բողոքը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անձնասպանութիւն.

ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱՆՔ

«Արձագանքը» կատարեալ անբարոյական, անտաղտ, անխիղճ հրատարակութիւն դառնալուց յետոյ, շատ հարցերու մէջ էլ իր վերջին ծայր ազդեցութիւնը ցոյց տալուց յետոյ,—վերջ ի վերջոյ հասել է այժմ կատարեալ ապաշուծութեան:

Ուրիշ ինչ անուն տանք այն թշուառ ինստիտուցիային, որ այդ ողորմելի թերթը անուամբ «Մշակի» վերաբերմամբ: «Արձագանքը» ի միջի պայտը ստուգ է, որ իբր թէ մենք յարձակվում ենք Արասխանեանի դէմ ոչ թէ որպէս Ներսիսեան դպրոցի ուսուցչի ֆրաստակար վարմունքի դէմ, և ոչ թէ այն պատճառով որ այդ վարմունքի պարտքը աշխատել է թէ իր վարմունքով և թէ իր ֆրաստակար յօդուածներով խախտել, քանզի մեր դպրոցական ինքնավարութիւնը, աշխատել է այդ ինքնավարութեան անունը կոտորել իր անձնական նպատակների համար,—այլ իբր թէ «Մշակը» այն պատճառով միայն յարձակվում է նոյն Արասխանեանի դէմ, որ սա շուտով խմբագիր է դառնալու, իսկ մենք իբր թէ սաստիկ վախենում, դողում ենք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընթերցողը երևի գուշակում է որ մենք դիտաւորութիւն ունենք խօսել էմմանուէլ Մանիի անձնասպանութեան մասին, որը յուզում է ամբողջ Թիֆլիսը ահա արդէն մի քանի օր շարունակ:

Այո, մենք ուզում ենք այդ տխուր անցքի, այդ անձնասպանութեան մասին խօսել, բայց ուրիշ կողմից ուզում ենք այդ անձնասպանութեան աւելի մի խօսել և հասարակական անձնասպանութեան անմիջական երկու թիւ մասին:

Երբ մի որ և է հասարակութիւն հալածում, խեղդում, ոչնչացնում է իր մէջ գտնված ամենալաւ, ամենաազնիւ ուժերը,—նա անձնասպանութիւն է գործում: Երբ հասարակութիւնը հալածում է իր մէջ յայտնվող շնորհ, օգտակար, վերա-

նրա ապագայ «Մուրճ» ամսագրի մրցութիւնը:

Մարդը պէտք է կամ ինքն ապուշ լինի, կամ իր ընթերցողներին ապուշի տեղ դնի, հաւատացնելու համար, որ մի լրագիր, այն էլ 16 ամսի արդէն գոյութիւն ունեցող լրագիրը, կարող է վախենալ մի դեռ լոյս չը տեսած անյայտ հրատարակութիւնից, և այն էլ մի ամսագրից, որը նոյն իսկ այն պատճառով, որ ամսագիր է, երբեք ոչինչ մրցութիւն չէ կարող անել մի լրագրին, լինելով լրագրից կատարելապէս տարբեր ձեւի, տարբեր տեսակի, տարբեր բովանդակութեան, տարբեր պահանջների, տարբեր ծաւալի մի հրատարակութիւն:

Ռուսերէն մի առաւել կայ, որն ասում է թէ ամեն մարդ իր արշինով է չափում ուրիշներին....

Ձը լինի՞ թէ նոյնն անում է և Աբգար Յովհաննիսեան: Մեր հասցէին նրա ուղղած խօսքերից յետոյ մարդ ակամայ տրամադրի է մտածելու, որ ինքն պ. Յովհաննիսեան, իր բոլոր հասարակական, կենսական յարաբերութիւններում իր բոլոր համակրութիւններն ու հակակրութիւնները յուրստիանցներով է չափում:

Այո, պէտք է բարոյական զգացմունքներ լինեն և խղճի վերջին նշույլը կորցրած լինել ուրիշին այն ամեն յատկութիւնները վերագրելու համար, որ մարդը ինքն ամենից շատ ունի:

Վերջապէս ո՞ւմ զուլը կը մտնի այժմանից արդէն Արասխանեանի մասին խօսել, որպէս խմբագրի մասին.... Շատերը, որոնք արդէն զործել են, որպէս խմբագիրներ, իրաւ ցոյց են տուել իրանց որպէս

նորոգիչ, առաջադէմ գաղափարները,—նա անձնասպանութիւն է գործում: Երբ հասարակութիւնը հալածում է իր միջից իր հասարակական ամենալաւ գործիչներին,—նա անձնասպանութիւն է գործում:

Երբ մի հասարակական դասակարգ, լինի դա առեւտրական կամ մի այլ դասակարգ, խեղդում, յուսահատութեան ու մահվան է հասցնում իր մէջ յայտնված ամենալաւ, ամենաազնիւ անդամին, կամ երբ նոյն դասակարգը անտարբերութեամբ թողն է տալիս, որ այդ իր ազնիւ ընկերակիցը հալածվի իր դասակարգի մի վատ, մի անպիտան անդամի ձեռքով,—նա անձնասպանութիւն է գործում:

Ամեն որոտը ձեռք կը պատմէ որ եթէ հանդիպէք անտառում գայլերի մի խմբի և հրացան արձակելով գայլերի վրա վերադառնալու գայլերից միին, բոլոր միւս քաղցած գայլերը անմիջապէս կը թափվեն վերադառնալու ընկերով վրա և դեռ ժամանակ չը տալով նրան ստուգելու կտոր կտոր կանեն նրան և անմիջապէս կուտեն նրա միտը:

անարժան մարդիկ կրելու հասարակաց կարծիքը զեկաւարդների կոչումը: Բայց Արասխանեանի մասին, ձեռքը խղճի վրա դրած, ոչ մենք, ոչ էլ հասարակութիւնը դեռ ամենաթոյլ հասկացողութիւնն էլ չենք կարող կազմել թէ նա ինչ տեսակ խմբագիր կը լինի, ամենաթոյլ գաղափար էլ չենք կարող ունենալ այն բանի մասին, թէ ինչ կը լինի նրա խմբագրութեամբ հրատարակվելի ամսագիրը, քանի որ պարտք մեզ դեռ ոչինչ ապացոյցներ չէ տուել խմբագիր լինելու ընդունակութեան կամ անընդունակութեան մասին:

Իսկ ինչ որ վերաբերում է նախանձի զգացմունքին, եթէ մեր բնաւորութեան մէջ էլ գտնվէին ամեն հային յատուկ նախանձի նշույլները, կարող ենք հաւատացնել ձեռք, պ. Յովհաննիսեան, որ մենք կորնէինք մեզ համար աւելի յարգելի անձնաւորութիւններ, որպէս զի դարձնենք նրանց մեր նախանձի առարկայ, քան թէ հրատարակական բարոյականութիւնը, համոզմունքը և սկզբունքները իրանց անձնական, միտումների համար մամուլի միջոցով ուսնակիտ անող ձեռք պէս անձնաւորութիւններ:

Ձուր տեղ էք աշխատում, ձեռք մի որ և է բարձր պատուանդանի վրա դնելու....

Ինչ կողմից էլ մարդը շուտ տայ ձեռք պահներին, հաւատացէ որ ոչ ոքին նախանձելու առիթ չէք տալիս, քանի որ նախանձելու բան էլ չը կայ ձեռք մէջ:

«Մշակը» իր գոյութեան ամբողջ ընթացքում ոչ մի ուրիշ հրատարակութեան մրցութիւնից երբեք չէր վախենում, միւս հրատարակութիւնների թշնամութիւնն էլ երբեք չը կարողացաւ «Մշակին» ֆրաստել: Բայց ուրիշ կողմից «Մշակը» երբեք կարիք չունէր և ոչ մի հրատարակութեան բարեկամութեան մէջ:

Բայց մի և նոյն ժամանակ միւս հրատարակութիւնները միշտ թշնամաբար էին վերաբերվում դէպի «Մշակը», միշտ վախենում էին նրա մրցութիւնից և երեւակայում էին, որ եթէ չը պաշտպանեն նրան, այլ թշնամաբար վերաբերվեն նրան,—նա կը կորչի, կանհետանայ: Բայց «Մշակը» փնտում էր և նրան չէր ֆրաստում ուրիշներին թշնամութիւնն ու նախանձը:

Երբ 1884 թւի ընդմիջումից յետոյ մենք նորից սկսեցինք հրատարակել «Մշակը» և 1885 թւի հոկտեմբերի առաջին համարում ուղարկեցինք Թիֆլիսի բոլոր լրագիրների խմբագրութիւններին, նրանցից ոչ մէկը չը յիշեց որ «Մշակը» նորից սկսեց լոյս տեսնել, ոչ մէկը չը յիշեց, որ ստացաւ մեր լրագրի

առաջին համարը.... Եթէ սա նախանձ չէ, եթէ սա մրցութեան երկիւղ չէ,—ապա ի՞նչ է....

Ռուս լրագիրներից միայն «Тифлисский Листок» բարեկց համակրական տողերով «Մշակին» նորից հանդէս գալը, իսկ հայոց լրագիրներից միայն «Արձագանքը» երկու խօսք ասեց «Մշակին» առաջին համարի մի խառն լուրի առիթով, այն էլ ամենաթշնամական ձեւով, կատաղութեան փրփուրը բերանին....

Եթէ սա էլ ամենաստոր նախանձի և մրցութեան երկիւղի ապացոյց չէ,—ապա ի՞նչ է:

Բայց դարձեալ «Մշակը» չը ոչնչացաւ մրցութիւնից վախեցող մեր մամուլի կողմից ցոյց տուած այդ նախանձի և սխտեմական, նախամտածված հաւաքական թշնամութեան պատճառով, այլ և իր ընդմիջումից յետոյ ունեցաւ նոյնքան և աւելի բաժանորդներ, քան թէ ընդմիջումից առաջ:

Ուրեմն մենք ոչ կարիք ունենք մեր մամուլի միւս օրգանների բարեկամութեան մէջ, ոչ էլ առիթ ունենք վախենալ որ և է ուրիշ օրգանի «Մշակին» հետ մրցութիւնից, քանի որ մեր դէմ ցոյց տուած ստոր նախանձն ու կատաղի թշնամութիւնը միշտ անգործ եղան «Մշակին» նոյն իսկ ամենաջնչին ֆրաստ հասցնելու:

Եւ հիմա վեր էք կենում և ուզեալով մոլորեցնել հասարակութիւնը, հաւատացնում էք որ «Մշակը» վախենում է ոչինչ անցեալ, դեռ ևս ոչինչ անուն չունեցող նոր հրատարակութիւնից, այն էլ մի ամսագրից, որի աջող կամ անաջող ապագայի մասին, որի լաւ կամ վատ լինելու մասին դեռ ևս անհայտնի է որ և է քան ասել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԲՈՂՈՔԸ

Կիրակի օր, նոյեմբերի 13-ին, Գլխորդակայ փողոցի վրա խռոված բազմութիւնը մի արտասովոր տեսարան էր ներկայացնում. հայ, ռուս, վրացի, վաճառական, երիտասարդութիւն, կանայք, արհեստավարներ, խտրեղէններ, զինուորականներ—մի խօսքով ամեն չըմանի և ամեն պարագայում հաղաւոր մարդիկ միասին հաւաքված՝ ներկայացնում էին մի կենդանի բողոք դիտաւր հարստահարութեան և անգութ ագահութեան դէմ....

Կերով հետո Ուրեմն օգնելով ուրիշին, ամեն մարդ օգնում է և իր անձին, իսկ խեղդելով ուրիշին, կամ թող տալով որ ուրիշին խեղդեն,—մարդիկ իրանք իրանց են ֆրաստում:

Առաջին դէպքում մարդիկ գործում են յօդուտ իրանց անձի, յօդուտ ընդհանուր հասարակաց անձնասպանութեան, իսկ երկրորդ դէպքում նրանք գործում են հասարակաց անձնասպանութեան:

Առեւտրական դասակարգին պատկանող մի մարդ, մի բարի, շիտակ, պատուական, եւսանդոտ, ազնիւ անհատ,—գլխադր հանդամանքների բերմունքով քանդվում, աղքատանում է: Բայց քանդվելուց, աղքատանալուց յետոյ այդ նոյն մարդը չէ կորցնում ոչ իր պատիւը, ոչ իր շիտակութիւնը, ոչ իր ազնւութիւնը, ոչ էլ վերջապէս իր եւանդը:

Նա կրկին դիմում է իր ընկերակիցներին, խնդրում է աշխատանք, որպէս զի համ ինքն ապրի, համ իր ընտանիքը պահի, համ էլ այնքան վաստակի, որ փոքր առ փոքր վճարէ իր պարտքերը իր պարտատէրերին:

—Լոնդոնից հեռագրում են, որ նորերս Զան-
դերաբում անգլիական նավերից մինը ձերբակա-
լեց մի բնիկական նավ, որը տանում էր մի քա-
նի ճորտեր: Բնիկական նավը իր ճանապարհը
շարունակելու իրաւունքը ստացաւ միայն այն
ժամանակ, երբ այդ ճորտերը ազատվեցան և փո-
խադրվեցան անգլիական նավը:

—Վերջին լուրերին նայելով, որոնք դալիս են
Աթէնքից, յունաց երկաթուղային ցանցի միաց-
նելը թիւրքաց երկաթուղային հետ, որը վաղուց
յարաբերութիւնների նիւթ է դարձել երկու կա-
ռավարութիւնների մէջ, հաւանականաբար աջող
վախճան կունենայ:

—Բրէսլավում, ինչպէս այնտեղից հեռագրում
են, կայսրը, ընդունելով բանուորների պատգամա-
ւորներին, ասեց, որ իր սրտին են մօտիկ բանուոր-
ների շահերը: Առհասարակ կայսրը շատ քաջ
կերպով վարվեց բանուորների պատգամաւորնե-
րի հետ, ձեռք տուեց նրանցից իւրաքանչիւրին,
և յայտնեց, որ ինքը կարծում է, թէ հաւատա-
րիմ հպատակութեան գործում տեղացի բանուոր-
ները օրինակ կը լինեն և ուրիշ բանուորների հա-
մար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՓԱՐԻՉ, 12 նոյեմբերի փարիզի մօտիցիպալի-
տեալ մտադրութիւն ունի դեկտեմբերի 2-ին ցոյց
անել Բոլէնի գերեզմանի վրա և այդ բանը մեծ
երկիւղ է ներշնչում:

ԲՈՒՄԱՐԵՍ, 12 նոյեմբերի Կաթոլիկական
նոր միսիստութիւն՝ որը հիմնված է պահպանու-
ղական և կառավարչական կուսակցութեան մէջ
կայացրած համաձայնութեան վրա: Նոր միսիստ-
ութեան մէջ երեք պորտֆէլ ստացան պահպա-
նողականները: Միսիստական խորհրդի նախա-
գահ կրկին նշանակված է Բոլէտտի, իսկ Կարպ
մնում է արտաքին գործերի միսիստ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՄԱ

Նոյեմբերի 8-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . . 96 ր. 75 >

Համբարդի վրա 100 մարկ	47 > 50 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	38 > 10 >
Ոսկի արծէ	7 > 75 >
Մաքսային կուպոններ	155 > 50 >
Արծաթ	1 > 18 >
Բորսային դիսկոնտներ	7 և 89/0 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	97 > 87 >
— — — — — 2-րդ	97 > 75 >
— — — — — 3-րդ	97 > 50 >
— — — — — 4-րդ	97 > 62 >
— — — — — 5-րդ	97 > 37 >
— — — — — 6-րդ	— > — >

Նոր 40/0 փոխառութիւն	81 > 62 >
Արեւելեան 50/0 փոխառութիւն 1-ին շրջ.	97 > 25 >
— — — — — 2-րդ	97 > 25 >
— — — — — 3-րդ	97 > — >

Ներքին 50/0 առաջին փոխառութիւն	271 > 75 >
— — — — — երկրորդ	242 > — >
51/20/0 րէնտա	101 > 75 >
Ոսկեայ րէնտա	177 > 50 >
Լոնդոնի քաղաքի կոնսոլիդաց. փոխառութիւն	148 > — >

Նոր երկաթուղային րէնտա	97 > 50 >
50/0 գրաւական թղթեր կառուած.	— > — >
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մեծ.	— > — >
— — — — — թղթաւ.	91 > 50 >
— — — — — թղթ.	98 > 12 >

51/20/0 գրաւական թղթեր խորհրդի	97 > 50 >
60/0 գրաւակ. թղթ. խորհրդի կալ. բան.	100 > — >
— — — — — Պոլսոյ վրա	99 > 75 >
— — — — — Պետ. ցույսի.	99 > 75 >
— — — — — Կիւիլի	100 > 50 >

— — — — — Մոսկովայի	99 > 50 >
— — — — — Բեսարաբ. ցույսի.	99 > 75 >
— — — — — Նիւ. Սամար.	100 > — >
— — — — — Վիլնայի	99 > — >
— — — — — Թիֆլիսի—72 և — տ.	97 > 50 >

— — — — — Գաթայի—18 և — տ.	97 > — >
Վ. օրծակ-Կամակի բանկի ակցիաները	667 > — >
Ռուսաց երկաթուղիների գրաւ. ընկ.	238 > — >
Իթէլիսկ-Բոլոգովի ընկ.	84 > 25 >

Ս. Պետերբուրգի քաղաքային օրծի- զացիաներ.	92 > 62 >
Մոսկովայի քաղաք. օրծիզացիաներ.	99 > 75 >
Եղեայի	100 > — >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրծ.	81 > — >

Ս. Պետերբուրգի բորսայի արտապրութիւնը
ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ-ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ

Արդէն սկսված են Բնիկականութիւնները շարունակվում են Եւրոպի մասին դիմել հիմնադրին:
Զիջանելով շատերի խնդիրներին, ազատ լսողների համար մուտքը նշանակված է 1 ր., իսկ կուր-
սային լսողների համար տարեկանը մնում է 75 ր.: Գասալիստութիւնները լինելու են ամեն երկու-
շաբթի չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամ 6—7 երեկոյեան:
Հիմնադիր կուրսերի Ա. ԱՐԱՍԻԱՆՆԱՆՑ
Тифлисе, Гановская ул., д. Иоанниани.

2—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱ-
ԿԱՆ Խորհրդարանում նոյեմբեր ամսին 30-ին, երեկոյեան 8 ժամին լինելու է Ա-
ձՈՒՐԻ (առանց կրկնաձուլի) կապալով տալու նոյն դպրոցի կառուածը № 49 (ըն-
ծայած հանգուցեալ Գարուսիւն Աբջեանցից), որ գտնվում է Կուր դետի հեղեղատի
(Սաղի) վրա: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ Հոգաբարձութեան մէջ ամեն օր,
բացի կիրակի և տօն օրերից առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

3—3

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ

"THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED", որը աշխարհիս ամեն
մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունէութիւնը ՊԱՐՍԿԱՍ-
ՏԱՆՈՒՄ, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹէՀԱՐԱՆՈՒՄ, կատարում
է ամեն տեսակ բանկային օպերացիաներ:

Յիշեալ բանկի ազէնտը Կովկասում

3—10

ԲՈՒՐԳՆԱՐՏ և ԸՆԿ.

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԻՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին գիշուհն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիբիկէի և Ընկ. գրավաճառանոցում, Թիֆ-
լիս, Գոլովինսկի Պրոսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:

16—40

ВЪ ГЛАВНОМЪ СКЛА ДѢ ЖИРАРДОВСКИХЪ МАНУ ФАКТУРЪ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԻՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՆԵՍ-
ՏՈՒՄ

Դժուրօվայա փողոցում, նախկին Արծրունի քարվանսարայում նոր ստացվել են պատ-
րաստ ԲԵՂԵՆՏԵՐ հետեւեալ չափերի.

2 1/2 x 3, 3 x 4, 3 x 5, 3 x 6 4 x 5, 4 x 6, 5 x 7.

ԴՈՆԵՐ և ԼԵՑՑ

7—10

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերկօվայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է Լօրկօ և Ընկ. տպարանը)

Պատու ունեւ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա
նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ
ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՆԱՆՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:
Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻԱՅԻ մի ՊՐՕՎԻԶՈՐԻ, որ փորձառու
թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեւ մեքենաներ,
նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հաշակար ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աշտոնութեամբ մաքրում է ջրերը կապա-
րից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մանրէներից ու աղերից և գերազանցում է բոլոր
միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:
Պրովիզորը մշտապէս դառնում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դժուրով այն օ-
ժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ
գործարանում կը պատրաստվեն, բացի զէլեքեան, միջային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱ-
ԼԱԿԱՆ ԲՈՅԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻՅԻ, ԼՄԻ, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, Լու-
ժնովկան ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կա-
նոններին: Արուստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշ-
կաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դե-
րազանցութիւններ. նրանք կարող են միշտ թաքմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-
նակ պարունակելով իրանց մէջ ածխածին գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա-
խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:
Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-
րութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին
յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:
Տարածալնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածող-
երին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ
գործարանների կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

43—50 (Ե)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄՆԱՅԻՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և
աչքի ց.

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.

ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ախտաբ. կեղծիքի, ջրի ց. և սիֆիլիսի:

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՂՍՄՍԿԻ—4 1/2—5 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի:

ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էլեկտրօթերապիա):

Հիւանդանոցում է մահ կ ա բ ա Ր ձ ո Ն Հ Ի Մ օ զ ե Ր :

ՎՃԱՐ—50 Կ: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ՍԱԼԻԱՆԻ ԶԿՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

որը գտնվում է Պուշկինսկայա փողոցի վրա, Թամաշեվի քարավանսարայի ներքի յար-
կում, ՏԵՂԱՓՈՒՎԱԾ է նոյն քարավանսարայի հիւանդանոցի կողմը, ՍՎԵՐԻ դիմաց, այն
անկիւնը, ուր գտնվում էր Ալեքսի գրասենեակը: Առաւօտեան մարդատար գնացքով
ստացվում են Թարմ ՁՈՒԹԻ, ՕՐԱԳՈՒԼ, ՀԱՏԻԿԱՌՈՐ (ժիդկա) և ՊԵՂԱՅԱԾ (մէջօշա-
յա) ԽԱԻՒՐ: Ամեն օր եփվում է ԳՕՇ կոչված ձուկը:

1—4

ԵԳԻՊՏՈՒ ԱԼԷԲԱՆԻՐԻԱ ԳԱՂԱԳՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՂՈՒ Է

„ՆԵՂՈՍ“

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ա Գ Ի Ր

Լրագրոյ տարեկան բաժանորդագինն է ամեն տեղի համար 10 ֆրանք.—վեցամսեայն 5
ֆրանք. միշտ կանխիկ վճարելի:

—Փոստային ծախսը խմբագրութեան կը վերաբերի:

—Լրագրոյ վերաբերեալ ամեն կարգի գրութիւնք պէտք է յղել հետեւեալ հասցեի. «Ա
խմբագրութիւն «ՆԵՂՈՍ» լրագրոյ» յԱլեքսանդրիա (Եգիպտոս). (բոսղ Լօբիսիէ): A la Rédaction
du Journal Arménien «NEGHOS», Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).

ԽՄԲԱԳԻՐ—ՏԵՐ ԱՆՏՈՆ ՌԵՏՈՒՆԻ